«ԼԵԳԱԼ ՊՐՈԳՐԵՍ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հեռ. (099) 084-085
gurgen-grigoryanpast@mail.ru
www.legalprogress.org
info@legalprogress.org

«ЛЕГАЛ
ПРОГРЕСС
ЮРИДИЧЕСКИЙ КЛУБ»
ОБЩЕСТВЕННАЯ
ОРГАНИЗАЦИЯ
Тел. (099) 084-085
gurgen-grigoryanpast@mail.ru
www.legalprogress.org
info@legalprogress.org

Legal Progress
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Տ. ՄՈՒԿՈՒՉՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մուկուչյան.

«Լեգալ Պրոգրես իրավական ակումբ» հասարակական կազմակերպությունն, իրականացնելով դիտորդական առաքելություն Հայաստանի Հանրապետությունում 09.06.2019 թվականին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, արձանագրում է հետևյալը.

Կազմակերպության անդամները դիտորդական առաքելությունն իրականացրել են Արմավիրի մարզի Վարդանաշեն և Ապագա, Կոտայքի մարզի Աբովյան համայնքներում: Արմավիրի մարզի Ապագա և Վարդանաշեն համայնքներում դիտորդական առաքելության կողմից չեն հայտնաբերվել խախտումներ, որոնք կարող էին անդրադառնալ ընտրությունների արդյունքների վրա:

Ընտրությունն անցել է հանգիստ, առանց լարվածության, կուտակումներ չեն արձանագրվել: Ընտրողների ազատ կամահայտնության վրա ճնշումներ, խոչընդոտներ չեն արձանագրվել: Միաժամանակ, «Լեգալ Պրոգրես իրավական ակումբ» հասարակական կազմակերպությունը՝ որպես դիտորդական առաքելություն իրականացնող, հարկ է համարում արձանագրել, որ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի ընտրությունների ժամանակ քաղաքում՝ ընտրատեղամասերի մոտակայքում, մասնավորապես նկատելի էին ոստիկանական բազմամարդ խմբեր, որոնց անհրաժեշտությունն, ըստ էության չկար և ակամայից ստեղծվում էր ճնշող իրավիճակ և լարվածության տպավորություն:

Այսպիսով, ամփոփելով 09.06.2019 թվականին կայացած ՏԻՄ ընտրությունները՝ «Լեգալ Պրոգրես իրավական ակումբ» հասարակական կազմակերպությունն արձանագրում է, որ ընտրություններն անցկացվել են հավուր պատշաճի և ընտրությունների արդյունքները համապատասխանում են ընտրողների ներքին կամահայտնությանը:

Միաժամանակ, «Լեգալ Պրոգրես իրավական ակումբ» հասարարական կազմակերությունը իր շնորհակալական խոսքն է հայտում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ պրոֆեսիոնալ և օպերատիվ աշխատանք իրականացնելու համար:

Հարգանքով «Լեգալ Պրոգրես իրավական ակումբ» ՀԿ-ի
խորհրդի նախագահ՝ Գ. Գրիգորյան